Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

CC BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

[illegible]

[illegible]

Երևան 1951

891.99-192
Ր-45 2

# ԱՐՄԻՐ ՅԵՐԳԱՐԱՆ



891.99-19
Մ-45

ՅԵՐԵՎԱՆ
ՊԵՏՀՐԱՏ
1931

10 NOV 2011

891.99-192
Մ-45

408177 63
891.99-192 Մելիքյան
Մ-45 կարմիր
յերգարան
386 21/XI

ՀԱՎԵԼՎԱԾ «ՄԱՃԿԱԼ» ԹԵՐԹԻ

# ԿԱՐՄԻՐ ՅԵՐԳԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑ
ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Վ. ԱՆԱՆՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

14 APR 2014

73.011

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՏ. 6243(Բ)
ՊԱՏՎԵՐ 1397
ՏԻՐԱԺ՝ 10000

ՊԵՏ. ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

40817-63

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելիր, ում կյանքը անիծել է,
Ով ճորտ է, մերկ է և ստրուկ
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կռվի յենք մենք ձըգտում:
Այս հին աշխարհը կփորենք մենք,
Մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կը շինենք մենք,
Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկե:

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
Վոչ խենթ հերոսը, վոչ արքան,
Մենք պետք է մեր ազատությունը
Կռենք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փըշրենք մեր լուծը
Յեվ հետ խըլենք վողջ հողը մեր,
Խըփենք մուրճերը, տանք մեր ուժը,
Քանի յերկաթը տաք է դեռ:

Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կըփրկե:

Թող մենք ճորտերս ու բանվորներս
Միանենք անխախտ մի իրավունքով
Ասել, վոր հողը մերն է, մերն է
Կորչի հարուստ, թող տըզրուկ:
Յեվ յերբ պայթի մեծ փոթորիկը
Յեվ կուշտ շըները չքանան,
Նորից յերկիրը և յերկինքը
Մերն են ու մերը կըմնան:

Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկի:

---



## ԴՈՒՔ ԶՈՀ ԳՆԱՑԻՔ

Դուք զոհ գընացիք
գոռ մարտին վըճռական,
Բանվորի դատին սիրով տոգորված.
Վերջին ձեր շընչով
շունչ տըվիք դուք նըրան,
Վոր ազատ տեսնենք նրա կյանքն անարգված:

Հաճախ մաշեցին
ձեզ սև մութ բանտերում
Վոսոխ դահիճներ անարգ, արնախում.
Դատով նողկալի
ձեզ դատ կըտրեցին,
Շաչող շըղթաներ վոտքիդ կըռեցին:

Հասավ որը վեհ
արթնացման բանվորի,
Յեվ նա հուժկնորեն դիմեց պայքարի—
Հավե՛րժ հիշատակ,
ընկերներ քաջարի,
Վոր զոհ գընացիք հանուն մեծ դատի:

Ձեր հետքից կըգան
նորանոր մարտիկներ,
Պատրաստ տանելու ձեր գործը վըսեմ.
Հավե՛րժ հիշատակ,
ընկերներ քաջարի,
Դուք զոհ գընացիք հանուն մեծ դատի:

---

## ԴՈՒ ԶՈՀ ԳՆԱՑԻՐ

Դու զոհ գնացիր
կատաղի պայքարում
Ընդդեմ բռնակալ արյունոտ աշխարհի.
Եղար անընկուն
դու ցարի բանտերում,
Տարար բռնություն ու տանջանք աքսորում:

Ստրուկ կարգերին
պատերազմ հայտնեցիր,
Բանվոր–գյուղացուն մեծ խորհուրդը տըվիր,
Արծիվ կոմմունար,
դու Վլադիմիր Իլյիչ,
Ընկեր, ղեկավար, դու մեր Մեծ ուսուցիչ:

Հյուսիս ու հարավ,
արևելք, արևմուտք
Տեսար բարձրունքներն ազատ մարդկության,
Ճընշված ազգերին
դու տըվիր մի նոր կյանք,
Բացիր ճանապարհ հըզոր Միության:

Եվ մենք կընթանանք
քո գըծած ուղիով
Անվախ, աներկյուղ, համարձակ, անսասան,
Մեռար դու, բայց քո
գաղափարը անմահ
Ապրում է մեր մեջ և կապրի հավիտյան:

―――



## ԳՈՌ ՄՐՐԻԿՆԵՐԸ

Գոռ մըրրիկները վոռնում ու շաչում են,
Սեվ մութ ուժերը մեզ ժանտ ճընշում,
Գոռ պայքարի մենք յելանք թըշնամու դեմ,
Գոռ պայքարի յելանք մենք համարձակ:

Եվ կըպարզենք մենք մեր վեհ ալ դրոշը,
Դրոշը կարմիր՝ մարտընչող բանվորի,
Դրոշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրոշը մեր վառ ու ազատ գարունքի:
Դեպ անողո՛ք մարտ,
Դեպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, հառա՛ջ, բանվոր դասա–
կարգ:

Գահ ու թագին ցարերի նզովք ու գարշանք,
Շըղթայով կաշկանդ մասսային հարգանք,
Մեր արյունով շաղախված և թագ և գահ
Գարշ վոսոխի արյունով կողողենք:

Եվ կըպարզենք մենք մեր ալ դրոշը,
Դրոշր կարմիր՝ մարտընչող բանվորի,
Դրոշր կարմիր7 մասսայի պայքարի գոռ
Դրոշը մեր վառ ու ազատ գարունքի:
Դեպ անողո՛ք մարտ,
Դեպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, հառա՛ջ, բանվոր դասա–
կարգ:

―――

## ՇԱՋՅՈՒՆ ՈՒ ՊԱՅԹՈՒՆ

Շաչյուն ու պայթյուն և վորոտ և կըրակ—
Ըմբոստ մարտնչում էր կոմմունան․
Վերջին մեր ուժերը, հուժկու գրոհի տակ,
Ընկան վոսոխի ճանկն սև մահվան:

Ցելավ մեր առջև գեներալը դաժան,
Կարդաց նա գազիր իր հրամանը—
«Ջարդված ու պարտված եք՝ մահին եք արժան
«Փորեք դե հիմա ձեր դամբանը,

Ցեվ մենք փորեցինք բահերովն ժանգոտ,
Մայր հողըն ահա խոր ճեղքել ենք,
Կանգնած ենք, սպասում ենք, ձայնում ենք ցասկոտ՝
«Դե շո՛ւտ կրակեցեք, մենք պատրաստ ենք:

Դահին գեներալը խնդաց ինքնագոհ․
«Ձեր իղձըն արդեն կատարվում է․
«Դուք հող եք տենչել միշտ, ահա ձեզ և հող․
«Իսկ «կյանքն ազատ»՝ յերկընքումն է,



—«Մաղթո՞ւմ ես, լըպիրշ, դահիճ դու գազան,
Անվրեժ չի՛ մնա մեր արյունը․
Ցեվ թող մահանանք մենք,—կապրի հավիտյան
Ազատ աշխատանքն ու կոմմո՛ւնան:

—«Իսկ դուք շարեշար յեղբայրներ անգիտակ,
Ինչո՞ւ յեն դողում ձեր զենքերը,
Թեկուզ և մեռնենք մենք ձեր հուր-կրակի տակ,
Բայց չեն ընզովի մեր շրթունքները:

—«Նըշանն շեշտակի, կրակեցեք դուք անահ.
Անհետ թող ցընդի մեր աճյունը․
Կեցցե՛ն խորհուրդները՝ փառոս լուսարձակ,
Գալիք վառ կյանքին մեր վողջույնը:

# ԱՆՎԱԽ ԸՆԿԵՐ

Անվախ, ընկեր,
դիմենք շար–շար,
Կըռվում հոգով ամրանանք,
Ազատության
վեհ ճանապարհ
Հարթենք կըրծքով մեզ համար:

Մեր որրորան՝
աղքատություն
Մեր մեծ ծընողն աշխատանք,
Աշխատանքի
ազատությունն
Թող լինի մեր դավանանք:

Շըղթայակապ շատ
տանջվեցինք
Յեվ շատ զըրկանք կըրեցինք,
Դաժան որերն
ահա անցան
Ժամն է հասել հատուցման:



Ժամն է հասել
մեր մեծ դատի,
Դեպի պայքար, դեպի մարտ,
Չենք վախեցել
ու չենք վախի
Մութ ուժերից բիրտ, տըմարդ:

Հուժկու բազկով
դեն շպըրտենք
Անարգ լուծը բըռնության.
Յեվ մայր հողի
կըրծքին մեխենք
Ալ դրոշն ազատության:

—

## Ե՛Յ ՄԱՐՏԻԿՆԵՐ

Ե՛յ մարտիկնե՛ր դուք, էյ տիտանե՛ր դուք.
Ռազմի շեփորն է զիլ շեփորում,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Մեր արդար դատն է գրոհի կանչում:
Ծանըր-մուրն, ծանըր մուրն
Քո հարվածը հուր-հրաշունչ.
Թափ, ավյուն մեր սրտում,
Ցել բանվոր դու հըզոր,
Ցել կըռվի ամեհի:

Փառք Իլյիչին մեր, կեցցե կոմմունան.
Կորչի կապանքըն, աքսոր ու բանտ,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Մեր վոխն անհուն է՝ վորոտ ու շանթ,
Ծանըր մուրն, ծանըր մուրն...

Արնանըրման է կարմիր ալ դրոշը,
Հրեղեն գուշակն է լույս գալիքի,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Ջարդենք կապանք կապիտալի:
Ծանըր մուրն, ծանըր մուրն...

Հազար ու բյուր ենք, շարքերով կուռ ենք,
Պոռթկում, հորդում ենք հեղեղ հորձանք,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Կորչի՛ խավարը, կեցցե՛ նոր կյանք:
Ծանըր մուրն, ծանըր մուրն...



## ԴԵՊԻ ՄԱՐՏ ԴԻՄԵՆՔ

Դեպի մարտ դիմենք սըրտով անվեհեր,
Մեծ գործին զոհենք մեր կյանքը.
Բարիկադ յելեք, բոլոր ճընշվածներ,
Ազատենք գերված աշխատանքը:

Հարվածենք խիզախ կամքով աներեր,
Վոսոխին մեր, վոր գարշ, նենգ է,
Բարիկադ յելեք, բոլոր ճընշվածներ,
Ազատենք գերված աշխատանքը:

Ե՛յ ցարե՛ր, ցարի անա՛րգ ծառաներ,
Ջուր են ձեր դավերն ու ջանքը,
Բարիկադ յելեք, բոլոր ճընշվածներ,
Ազատենք գերված աշխատանքը:

Դեպի մարտ դիմենք սըրտով անվեհեր,
Մեծ գործին զոհենք մեր կյանքը.
Բարիկադ յելեք, բոլոր ճընշվածներ,
Ազատենք գերված աշխատանքը:

# ՄՈՒՐՃԵՐԻ ԶԱՐԿԵՐՈՎ

Մուրճերի զարկերով մոլեգին
Ցրնցեցինք յերկրագունդը մեր հին
Մենք շաչող զավոդի զավակներ,
Մենք և հուր ենք, և մուր ենք, և կայծեր:

Մենք ազգեր, մենք ցեղեր բազմազան,
Հրնչեցնում ենք թմբուկը հաղթական:

Թրշնամու դեմ հուժկու հործանքով
Մենք հորդում ենք արար աշխարքով.
Բեվեռից մինչև բեվեռն է թընդում,
Մեր ցասկոտ ահեղ ձայնը հընչում:

Հուր ջահեր, բոց կրակ ենք ժայթքում,
Վոր խանձվի կապիտալն արնախում:

Մարտն ահեղ, մարտն վերջին վրեռական—
Նա ցրնցեց յերկրագունդը համայն.
Մեր չորս դին դղրդյուն ու թընդյուն—
Գահ ու թագ տապալված գիր ու գան...

Խորտակիչ են զարկերն մուրճերի.
Զարկն ահեղ կոմմունար բանվորի:

—



# ՄԵՆՔ ԴԱՐԲԻՆԵՐ

Մենք դարբիններ,
կամքը մեր յերկաթ,
Դարբնում ենք լուսեղեն նոր կյանք,

Դե բարձրացնենք վեր
Հրզոր մուրճերը—
Պողպատ սալին զուր չենք զարկում:

Բանվոր յերկրի
Մենք դարբիններ ենք,
Նըրա բարիքն ենք մենք կերտում,

Զուր չեն շարժվում մեր
Ջըլուտ թևերը,
Պողպատ սալին զուր չենք զարկում:

Մուրճերը մեր
Հուր են ժայթեցնում,
Դար դարերի շըղթան փըշրում,

Վողջ յերկրագունդը
Տես արթնանում է,
Վոտքի յելնում և մարտ տենչում:

Մենք նոր կյանքի
Դարբնում ենք բախտը
Արդար վաստակ ենք մենք կոփում,

Ազատությունն է
Մեր վառ բաղձանքը,
Հենց նրա համար ենք մարտ տենչում:

—

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԵՐ

## ԽԻԶԱԽ, ՄԻ՛ՇՏ ԽԻԶԱԽ

Խիզախ, միշտ խիզախ մենք դիմում ենք
Յերգեր ենք յերգում հաղթական
Մեր կոչըն հուժկու, խոր հընչում է,—
Կորչի կապիտալը դաժան:

Վոտքի կուռ դրոփ,
Սըրտի հուր տրոփ,
Լե՛ն բացեք ճամբեքը,
Կարմիր զորքն է հզորազոր,
Մեր ընկեր–ողերքը:

Զինվում ու զինվու ենք ամենոր
Բազմի գիտության պաշարով,
Կանգուն կմնան խորհուրդները
Մեր հաղթական ուժերով:

Վոտքի կուռ դրոփ,
Սըրտի հուր տրոփ...

Թիկունքն է մեր՝ թիկնեղ բանվորը,
Բատրակ–չքավոր գյուղացին.
Մեր կապը կոփված պողպատի պես,
Մարսի թող անարգ թըշնամին:

Վոտքի կուռ դրոփ,
Սըրտի հուր տրոփ...



40812-67

## ՊԱՏՐԱ՛ՍՏ, ՊԱՏՐԱՍՏ

Հարո՛ւստ բանկիր, հողի տեր,
Յելանք ձեր դեմ խըրոխտ,
Արյան ծարավ յերախըդ
Կանենք մենք վոտնակոխ:

Պատրա՛ստ, պատրաստ են ռումբերը,
Ալ դրոշը վեր պարզած,
Բոցբո՛ք, բոցբո՛ք մեր սրտերը,
Բազմի տենչով վառված:

Կարմիր բանակային ենք,
Բանվորի քաջ պաշտպան,
Յերբ կյանքը նրա ահի մեջ է,
Կանգնած ենք պահապան:

Պատրա՛ստ պատրա՛ստ են ռումբերը,
Ալ դրոշը վեր պարզած,
Բոցբո՛ք, բոցբո՛ք մեր սրտերը—
Բազմի տենչով վառված:

Յեկել հասել է որը
Վերջին ահեղ կըռվի.
Խարխուլ ու հին կարգերը
Հիմքից թող խորտակվի:



Պետ. կեն. գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР

Պատրա՛ստ, պատրաստ են ռումբերը.
Ալ դրոշը վեր պարզած,
Բորբո՛ք, բորբո՛ք մեր սրտերը—
Ռազմի տենչով վառված:

Կեցցե արդար վաստակը,
Հալալ հաց, աշխատանք,
Բերում է մեր բանակը
Բերկրանք ու ազատ կյանք:

Պատրա՛ստ, պատրա՛ստ են ռումբերը,
Ալ դրոշը վեր պարզած,
Բորբո՛ք, բորբո՛ք մեր սրտերը—
Ռազմի տենչով վառված:

---



## ՍՈՒՐԸ ԿՏՐՈՒԿ

Սուրը կըտրուկ մեր Կարմիր Բանակի,
Զորեղ պաշտպանն է բանվոր գեղջկի,
Լայն դաշտերից մինչ ծովերն հեռավոր
Բարձրը է ալ դրոշը նըրա—հըզոր:

Կուռ շարքերով ամուր,
Հաստատ, միահամուռ,
Խիզախ է մեր Բանակը անհաղթ,
Գեղջուկ, բանվոր ենք,
Հըզոր ու զոր ենք
Ցեվ մեր դաշինքը միշտ անխախտ:

Ֆրանս ու բրիտան յեղբայրները զինվոր,
Մեր հարազատն է գեղջուկ–բանվոր,
Լայն դաշտերից մինչ ծովեր... (և այլն):

Չինն ու հնդիկը ըստրուկ ու ճընշված
Մեզ են նայում հույսերով խանդավառ,
Լայն դաշտերից մինչ ծովեր... (և այլն):

Աշխատավոր մարդկության ենք պաշտպան,
Ո՞վ պիտի դուրս գա մեր դեմ— հանդիման,
Լայն դաշտերից մինչ ծովեր... (և այլն):

---

## ՀԵՅ ԱՌԱՋ, ԱՌԱՋ

Հեյ առաջ առաջ, մեր վաշտը,
Ալ դրոշակը պարզիր.
Ո՛ն, առա՛ջ դեպ ռազմադաշտը.
Ձիլ հնչուն մի յերգ կանչիր:

Մեզ տանում է վաշտապետը՝
Քաջարի հրամանատար,
Մեր զորքի հաղթ արարքները
Լավ գիտե արար աշխարհ:

Ձիլ կանչիր են մեր յերգը հին,—
Վոնց ջարդեցինք սպիտակին.
Հիշելու յե մեզ Դենիկին,
Յեվ դաշնակն ել կըհիշի:

Ճանաչում է գարշ Յեվրոպան,
Ուժը մեր մեծահամբավ,
Թե ինչպես Պերեկոպի մոտ
Վրանգելն ել թունդ ջարդ կերավ:

Թող փորձեն մեր վոսոխները,
Յելնելու մեզ դեմ առ դեմ.
Տես թե վո՛նց մեր սըվինները
Նրանց լեշն ապցան անեն:

—



## ՄԵԿՏԵ՛Ղ, ՊՈՂՊԱՏԵ ՇԱՐՔԵ՛ՐՈՎ

Մեկտե՛ղ, պողպատե շարքերով,
Վոտքի՛, կարմիր հերոսներ,
Մեծ պայքարի վառ կորովով,
Դուք պրոլետար մարտիկներ:

Թող ծածանվի ալ դրոշակը,
Փառք հավերժ Կարմիր Աստղին,
Պրոլետար Կարմիր բանակը
Կը ջարդի նենգ վոսոխին:

Ել մենք չգիտենք տատանումներ,
Միշտ դիմել ենք շեշտ, համառ,
Թափվի թող մեր արյունը
Բանվոր-գյուղացու համար,—

Թող ծածանվի ալ դրոշակը…

Լենինիզմը՝ միակ ուղին:
Կոմկուսը մեզ ղեկավար,
Առաջ, առաջ՝ մեր Իլիչի
Վեհ գաղափարի համար:

Թող ծածանվի ալ դրոշակը…

—

# ԾՈՎԵՐՈՎ

Լավ հըսկիր դու ծովափերը,—
Տես վըխտում են անդադար
Թըշնամու զրահանավերը
Սահմանում սավետական։
    Ծովերով, ծովերով
    Մեր կարմիր նավատորմ
    Ծովերով, ծովով, ծովով
    Արշավիր հուժկու հըզոր։
Հա՛ կարմիր մեր նավատորմը,
Կերտած կամքով՛ն բանվորի,
Դեմ վոսոխի կանգնած է նա
Շար դրոշներ կայմերին։
    Ծովերով, ծովերով...
Կոմյերիտ եմ, յես բանվոր եմ,
Բոլորեց իմ քսան տարին,
Ահա արդեն կամավոր եմ,
Նավատորմի նավաստին։
    Ծովերով, ծովերով...
Դե՛ հսկիր դու ծովափերը,
Թշնամին արթուն է, զգաստ,
Թընդացնի թող ծով-ծովերը
Մեր հաղթ կանչը «միշտ պատրաստ»։
    Ծովերով, ծովերով,
    Մեր կարմիր նավատորմ,
    Ծովերով, ծովով, ծովով,
    Արշավիր հուժկու հըզոր։



# ՄԵՐ ԿԱՄՔԸ, ՄԵՐ ԿԱՄՔԸ

Խորունկ հանքերումը, կանաչ հանդերումը,
Հարյուր-միլիոնները ուժերն են լարել,
Ուժերը լարել ու համառ հիմնադրում են,
Կռում ու կոփում են նոր կյանք, նոր արև։
Իսկ մենք-բանվորի գեղջուկի վորդիներըս,
Հերոս զինվորներըս կարմիր բանակի,——

Մեր կամքը, մեր կամքը, մեր կամքը զինել ենք,
Սարի պես կանգնել նրանց քամակին։

Կապույտ ծովերից, լազուր լեռներից
Այն կողմ է նետվել մեր վոսոխը նորոտ.
Այնտեղ նա զինվում է ուզում է նորից գալ,
Տիրի մեր աշխարհը ցարի մտրակով։
Իսկ մենք—բանվորի գեղջուկի վորդիներըս,
Հերոս զինվորներըս կարմիր բանակի,—

Մեր կուռ բազուկները մարզել ու զինել ենք,
Պատի պես կանգնել ենք արթուն պահակի։

Ահա մեր արևը պայծառ բարձրանում է,
Շինվում է մեր տունը բետոն, գրանիտ,
Շինվում է մարդու յերազած այն կոմմունը,
Բայց մեզ խանգարում է կուլակ թշնամին,
Իսկ մենք—բանվորի գեղջուկի վորդիներըս
Հերոս զինվորներըս կարմիր բանակի,—

Մեր կամքը, մեր կամքը, մեր կամքը զինել ենք
Ցեվ մեզ դարձրել ենք պողպատե զրահակիր։

Գիտենք, նա գալու յե, անխուսափելի յե,
Գալու յե վտանգը մի որ մեզ վրա.
Թումբի, հրդեհի և գազի ամպերի մեջ
Յերկու դասակարգ կզարկվեն իրար,
Իսկ մենք բանվորի, գեղջուկի վորդիներըս,
Հերոս զինվորներըս կարմիր բանակի,—
Մրե կուռ բազուկները մարզել ու զինել ենք,
Հագել ենք շինելը, կապել ենք գոտի:

Գալիք հրդեհի մեջ, անահ մեր բանակը,
Մեր մեծ դասակարգը հաղթող կլինի.
Ե՛յ մեր հաղթանակը, հանուր հաղթանակը,
Կեցցե մեր բանակը կարմիր աստղանի,
Յեվ մենք—բանվորի գեղջուկի վորդիներըս,
Հերոս զինվորներըս կարմիր բանակի.
Մեր կամքը, մեր կամքը զինել ենք,
Յեվ մեզ պատրաստել ենք այդ հաղթանակին.

—



# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

## ՅԵՐԻՏ. ԳՎԱՐԴԻԱ

Հառա՛ջ դեպ արփին հուր,
Դեպ պայքար, ընկեր,
Ճամբա բանանք, ընկեր,
Հարթենք սար–քար, ընկեր.

Անվախ հառաջ ու համարձակ,
Միշտ բարձըր մեր կարմիր դրոշակ,
Յերիտ. մենք գվարդիա բան–գեղջկի,
Հառաջ, ո՛ն, շեշտակի:

Մատաղ կյանքի փորձով գիտենք
Ճորտի լուծ—աշխատանք,
Մանկուց տարել—կրել ենք
Սորուկի տանջանք ու կապանք:

Մեր վես հոգին ճընշել է միշտ,
Խավար կյանքի շղթան ու վիշտ,
Յերիտ. մենք գվարդիա բան–գեղջկի,
Հառաջ, ո՛ն, շեշտակի:

Կանգնած քուրա-բովի մոտ
Քրտինք թափինք ծոր-ծոր,
Տանջվել ենք մենք, որ նարպուտ
Հարուստն ապրի անդորր:

Ցեվ փորձըն այդ դըժվար, դաստիկ,
Մեզնից կոփեց հըզոր մարտիկ.
Ցերիտ. մենք գվարդիա բան-գեղջկի,
Հառաջ, ո՛ն, շետակի:



## ՑԵՐԻՏ. ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐ ԵՆՔ

Ցերիտ կոմունիստներ ենք մենք
Մարքսի ուսմունքի ջատագով.
Քանդենք հիմքերը կապիտալի,
Հյուսենք կոմմունիան վառ հոգով:

Անսասան դեպ բարիկադը,
Անվեհեր ու համարձակ,
Արյունով ներկենք մեր դատը
Արնավառ դրոշակի տակ:

Ցերիտ կոմունիստներ ենք մենք
Հաջորդ՝ ավագ ընկերներին,
Մեր գիտությունն, կորովն ու ուժը
Կըտանք ազատ աշխատանքին:

Անսասան դեպ բարիկադը ...

Մանգաղն ու Մուրճը մեր փարոսն է,
Սուր ու սըվին՝ մեզ հընազանդ.
Բանվորի դատը մեր որենքն է,
Դատն պաշտպանելը՝ մեր ավանդ:

Անսասան դեպ բարիկադը...

## ՄԵՆՔ ԿՈՄ-ՅԵՐԻՑ.

Մենք կոմ-յերիտ ենք, նոր կյանք կառուցող,
Հիմնում ենք, կերտում կուլտուրան մեր նոր,
Մենք կոմ-յերիտ. ենք, հոգով արևաշող,
Պաշտպան ենք ճընշված մարդկության հզոր:
Լսիր կոչը փողի, կանչն աշխատողի—
«Միացեք պրոլետարներ, վերջ տանջանքին
ձեր»—
Լսի՛ր

Լոզունգն է մեր հին— «կորչի կապիտալ».
Պողպատ սրվինով այս աշխարհում վողջ
Ճընշված մարդկության կյանք կըտանք ազատ-
Զենքով տապալենք փաշիզմը ամբողջ:
Լսիր կոչը փողի, կանչն աշխատողի—
«Միացեք պրոլետարներ, վերջ տանջանքին
ձեր»—
Լսի՛ր

Դու պայքարի, տես, ալիքը համառ
Զարկում է արար աշխարհովը մի,
Ժամն հընչեց, ընկեր, ժամն ազատարար,
Փութա շարքերը, մի ուշանա, մի:
Լսիր կոչը փողի, կանչն աշխատողի,—
«Միացեք պրոլետարներ, վերջ տանջանքին
ձեր»—
Լսի՛ր

---



## ՀԱՆԴԱՐՏ, ԸՆԿԵՐՆԵՐ

Հանդարտ, ընկերներ,
Գըլուխ խոնարհենք—
Պատանի կարմիր
Մարտիկն է ընկել.
Դեպի կըռվի դաշտ
Դիմեց անվեհեր,
Բռնած իր ձեռքին
Հըրացանն իր ընկեր:

Կըռվեց համարձակ,
Ու գանգատ չարեց,
Մի խոսք չասաց նա
Թե՝ կըռվից հոգնեց.
Իր պարտքն կատարեց
Ազնիվ, աներեր,
Նըննջեց հավիտյան
Ռազմիկն անվեհեր:

Հանդարտ ընկերներ,
Գըլուխ խոնարհենք—
Պատանի կարմիր
Մարտիկն է ընկել.
Դեպի կըռվի դաշտ
Դիմեց անվեհեր,
Բռնած իր ձեռքին
Հրացանն իր ընկեր:

---

# ԱԼ ԴՐՈՇՈՎ

Ինչն է վառ պահում մեր մեջ
Կռվի բորբոք—
Հուր տենչն անշեջ.

Հավատ ունենք
Մենք անսասան
Դեպի փայլուն
Մեր ապագան:

Ալ դրոշով
դեպի մարտ—
Մե՛կ, յերկո՛ւ,
յերե՛ք ...

Հաղթ բազկով
Միշտ պատրաստ—
Մե՛կ, յերկո՛ւ,
յերե՛ք ...

---



# ԵՂԵ՛Ց, ՊԻՈՆԵՐ

Եհե՜յ, պիոներ,
Կազմենք խիտ շարքեր,
Պարապ Լենինյան
Կանգնենք ընկերներ,
Զարկեք թմբուկներ,
Վեր պահեք դրոշակ,
Քայլիր քաջասիրտ,
Քայլիր դու բանակ:

Թախիծ, տրտմություն
Պետք չեն մեզ յերբեք,
Տոկուն եր Լենին—
Հավետ միշտ պայծառ:
Այսօր նա մեզ հետ
Մեծ Հոկտեմբերի
Տոնին մարդկության—
Տոնին բանվորի:

Թընդա թող թնդա
Մեր յերգը հըզոր,
Կարմիր աշխարհի
Բանվորի բոսոր,
Կրծքում վառ պահենք
Կամք խորհրդային,
Վոր տանք Հոկտեմբեր
Համաշխարհային:

---

## ՄԵՆՔ ՅԵՐԳՈՒՄ ԵՆՔ

Մենք յերգում ենք
 Վառ ու բոսոր
  կյանքը նոր,
Ելեկտրական
 շինարարքը
  մեր հզոր.
Յերգում ենք մենք
 Գործարանը
  յեռացող
Մեծ գալիքի
 Բախտը ձուլող
  լուսաշող:
Ուր զնգում է
 Թափը հազար
  զարկերի
Ուր հորդում է
 յերգը հազար
  սրտերի,
Ուր բյուր հազար
 կյանք է կերտվում
  Հուսալի,
Ուր փոթորկվում
 կյանքը հզոր,
  Վիթխարի:

---



## ՀԱԶԱՐՆԵՐՆ ԵՆ

Հազարներն են փողոց յելել,
Հազարներն են իրար խառնվել,
Ալեկոծված ծովի նման
Խիտ շարքերը դեմ հանդիման —
 Այս մեծ որերի, այս տոն որին,
 Միջազգային Յերիտ–որին:

Անվերջ անտառ դրոշների,
Անհաղթ բանակ պիոներների,
Վառ աչքերում նրանց արի
Հուր շանթեր կան մեծ պայքարի —
 Այս մեծ որին, այս տոն որին,
 Միջազգային Յերիտ–որին:

Յերբ հնչում է կանչը հզոր —
— Պիոնե՛ր, յեղեք պատրաստ, —
Հազարները, մեկեն հուժկու
Վորոտում են — «Մենք մի՛շտ պատրաստ» —
 Այս մեծ որին, այս տոն որին,
 Միջազգային Յերիտ–որին:

---

# ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ԵՐԳԵՐ

## ՂԱՐԴԱՇ ՀԱՍԱՆ

Դարդաշ Հասան,
Ընկե՛ր Թեվան,
Եյ, տավարիշշ.
Դարչո՛, Իվա՛ն—
Մերն է բախը,
Մանգաղ ու մուրճ,
Ցեկեք գըցենք
Ամուր կամուրջ:

Բահ, մուրճ, մանգաղ
Ուր վոր զըընգան,
Ուր վոր ծաղկեն
Վար, ցան ու քաղ —
Ենտեղ մենք ենք
Հոգով անհաղթ,
Ենտեղ կանենք
Կյանքը ուրախ:

Չին, ու Ճապոն,
Հնդիկ, Հաբաշ —
Ընկերներ ենք
Սիրով դարդաշ.
Հոգով մեկ ենք,
Շահով մեկ ենք,
Թշնամու դեմ
Մահով մեկ ենք:

—



## ԱՆՄԱՐ ՄՆԱ

Անմար մընա մեր գլխին
Խորհրդային արևը,
Թող փայլեն նըրա լույսից
Մեր դաշտերն ու սարերը:

Մեր գյուղերը կեղեքված
Սավետն յեկավ ազատեց,
Մեր արտերին չորացած
Սավետն յեկավ ջուր տըվեց:

Ջրանցքների մեր յերկրում
Թող սավետը բոյ քաշի,
Նըրա կարմիր ծոցի մեջ
Կոմսոմոլը կանաչի:

Կարմիր սառը նակատին
Անխախտ մընա սավետը.
Նըրա կարմիր կըրակը
Մեր սըրտերում հավետ է:

—

# ԱՐՏԵՐԸ ՋՈՐ ԵՅԻՆ

Արտերը չոր էյին, սըրտերը տոչոր,
յերբ ջըրանցք չըկար.
Արևը խանձում էր արտերի սիրտը,
յերբ ջըրանցք չըկար.
Կյանքը դժվար էր և որերը չար,
յերբ ջըրանցք չըկար.
Յերկրի տերերը դուշմաններ էյին—
տըմարդի ու չար:

Հիմա հանդերում, ջըրանցքներ անթիվ
ջըրերով վարար,
Յերբ յերկրիս վըրա իշխում է պայծառ
սավետը արդար.
Արտերը կանաչ են, սըրտերը՝ ուրախ,
յերբ ջըրանցքը կա.
Ել անճանաչ է մեր կարիքը չար,
յերբ սավետը կա:

—



# ԾԼԵԼ Է ԱՐՏՍ

Ծլել է արտս,
Ծփում է արտս,
Կորել է դարդս ջան,
Խնդում զվարդ է,
Բացված նոր վարդ է
Արտս ազատ է, ջան:

Կանաչ է դաշտը,
Կորավ յերաշտը,
Ամառը հաշտ է, ջան,
Յեկել է նորը
Խնդության որը
Գյոզալ տրակտորը, ջան:

Փրկեց մեր ցավը,
Սավետր գալը,
Կապույտ կանալը, ջան
Շուլիկս շող է,
Արևի շող է
Շողիկս նոր է, ջան:

Կարմիր ծաղիկ է
Ազատ բաղի մեջ
Պիոներ Շողիկս, ջան
Նա թռվըռում է,
Աշխույժ յեռում է՝
Ազատ թռչուն է, ջան:

—

## ԱՐՏԵՐԸ ԾԼԵԼ ԵՆ

Արտերը ծըլել են,
Արտերը կանաչ են,
Արտերը շընչում են,
Արտումը յերգեր կան,
Նրանք ինձ ճանաչ են
Ու բարձր հընչում են:

Արտերը փռվել են,
Անափ ու անծեր են,
Խալու պես բացվել են,
Յերկինքը շաղել են,
Ամպերը անցել են,
Ծիլերը թացվել են:

Արտերը ծովի պես,
Ծիծաղով ծըփում են,
Ծափում են ծովիցը,
Ծըլերը ծարավ են,
Ծըլերը ծըծում են,
Ծըծերը հողիցը:

Յեվ ամեն մի ծիլը
Մեր յերկրի սրտումը
Ժրպտավառ և տաք է.
Հին աշխարհի դեմը,
Մոլեգին մարտումը
Մահացու գընդակ է:

---

## ՄԵՐ ՀԱՆԴՈՒՄ

Հրեն, մեր հանդում,
Անուշ յեռանդով
Հողը քանդում են
Բանվորներ անթիվ
Վաղուց պապակած
Մեր արտերն անբեր
Ջուր են յերազում
Տարիներ անթիվ …

Հեռու տեղերից
Գալիս, անցնում եր
Արազը վարար՝
Վո՛նց յերազ. անհաս.
Արևի տապից
Հանդր խանձվում եր
Ջրից հեռու—,
Ջրերից անմաս:

Անցնում եր տարին
Տասներկու ամիս
Ու եյի կրկնում
Կյանքն իր բոլորակ,
Մեր հանդի վրա
Միշտ ման եր գալիս,
Անբուժ ցավի պես
Ցերաշտը ագահ

Յեվ մեր արտերի —
Արցունքով ջրված
Քրտնաշաղ բերքը
Խլուրդն է կրծում.
Իսկ տանը ելի
Հացի կարոտը —
Տեր ու յերեխի
Սիրտն եր լուռ մաշու

Իսկ հիմի, հրեն,
Մեր արձակ հանդում
Ջրանցք են փորում,—
Փառք փորողներին,
Վաղուց չոր— անջուր
Արտերի համար—
Կենսարար ջրով
Ջրանցքներ կանցնեն:

Յեվ այս պապակած
Ջրի ու սերմի
Կարոտ հանդը մեր —
Ընդհարձակ ու լայն
Ծածկվի պիտի —
Բամբակի — հացի
Արտերով վարար,
Խնդությամբ բերքի:

## ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ

Էյ— հե՛յ, ինչքան արտեր ունենք—
Աշխարհով մեկ, աշխարհով մեկ
Ջահել սըրտի վարդեր ունենք —
Աշխարհով մեկ, աշխարհով մեկ:

Արևն յելել սարն է բըռնել —
Շողքը կարմիր աշխարհով մեկ,
Մեր կոլխոզի արտն ել, բեռն ել,
Հանդ ու արտը աշխարհով մեկ:

Առուների ջուրը խոր
Առատ–առատ դաշտերով մեկ,
Կուլակների կըռոցն անզոր
Սուտն ու սըտերն աշխարհով մեկ:

Բայց ելի վառ արտերը մեր
Հընձի պատրաստ աշխարհով մեկ,
Ելի պայծառ սըրտերը մեր
Աշխարհի դեմ, աշխարհով մեկ:

———



## ԵՍ ԲԵՐՔԸ ԲԱՐԻՆ Ա

Էս բերքը բարին ա,
Ցորենը կալին ա
Գուրլնի վաղեն թըմմել ա
Տրակտորի տարին ա:

Ճամբեքը շոշել ենք
Կոլխոզը դոշել ենք,
Սելի վաղեն թըմմել ա
Մաշինի տարին ա:

Հին տունը փըլել ա,
Կուլակը զըլել ա,
Ջոռքի վաղեն թըմմել ա
Բատրակի տարին ա:

Միջակ–չքավոր ենք
Բանելու սովոր ենք,
Կոլխո՛զ աղջիկ կարմրել ես
Սիրելուդ տարին ա:

Բամբակը փաբրիկին,
Ջիթը կոլխոզնիկին,
Ղըռ— հողի վաղեն եկել ա
Ջըրելու տարին ա:

———

# ԴՈՒՄ-ԴՈՒՄ

Ռումբերը թընդում են,
Թումբերը քանդում են,
Ճամբեքը հարթում են,
Դո՛ւմ — դո՛ւմ — դո՛ւմ ...

Խոր—խոր անդընդումն ենք,
Սըրտով լի խընդում ենք,
Ժայռերը քանդում ենք,
Դո՛ւմ — դո՛ւմ — դո՛ւմ ...

Ծափ ու խընդում է,
Սըրտով լի խնդում ենք,
Ջուրը թնդում է,
Դո՛ւմ — դո՛ւմ — դո՛ւմ ...

Յերգը մեր թընդում է
Յերթը մեր խընդում է,
Կյանքը մեր ժըպտում է,
Դո՛ւմ — դո՛ւմ — դո՛ւմ ...

---



# ՄԵՐ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Մեր դաշտերում ենքան ծաղկունք,
Հազար—հազար գույն— գույնըզգույն,
Վոսկենման դեղին արտեր
Խընդում սըրտեր ինչպես Զանգուն:

Մեր դաշտերում ենքան հույզեր,
Հաղթ մկաններ՝ պիրկ ու ջըլուտ
Անվերջ յեռանդ, ծիծաղ ու սեր,
Շոգիձիեր կամքին հըլու:

Յեվ ինչպես լույսն ելեկտրոլամպի
Լուսավառվող մութ խավարում
Իշխող շունչը սև յերկաթի
Յերկաթավառ մեր դաշտերում:

---

# ԼՈՒՍԵ ՏՈՆ Է

Լուսե տոն է, լուսատոն, մեր յերկիրը
լուսաթով,
Կերտում ենք մեծ լուսատուն, խորհրդային
խնդություն,
Գալիս մի հուր–հըրաշք՝ կերտված կամքով
ու բազկով՝
Մեզ բորբոսից ազատող,— խորհրդային
խնդություն:
Խըլըրտում է ամեն գյուղ, ամեն հյուղուկ,
ամեն սիրտ,
Վողջ յերկիրը լուսաթով,— խորհրդային
խնդություն:
Ցեվ վարակող ժըպիտով, յերգի նըման
սըրտագեղ,
Լույսը կանցնի տընից տուն,— խորհրդային
խնդություն:
Գործարանում նորաշեն անիվները ծանրաշարժ
Կաշխուժանան մըշտարթուն,— խորհրդային
խնդություն:
Դեպի, դեպի կոմունան վազքի յելած, մեր
յերկիր,
Սըլանում ես թափով դու,— խորհրդային
խնդություն:

—



# ՀԵ՜Յ, ԴԱՐՁԻՐ

Հե՛յ դարձիր, մեքենա, դարձիր,
Թող խնդա յերկիրն մեր անծիր,
Հե՛յ դարձիր, մեքենա՛, դարձիր
Խավարը հըրդեհիր, անցիր:

Քո դարձում հորձանք կա, հուզում,
Հորձանքիդ, թըռիչքիդ, դուրքան,
Դու մեր նոր աշխարհի սրտում
Նոր արև, նոր գարուն, հեյ ջա՛ն:

Հե՛յ դարձիր, մեքենա, դարձիր,
Թող խնդա յերկիրն մեր անծիր,
Հե՛յ դարձիր, մեքենա, դարձիր,
Խավարը հըրդեհիր, անցիր:

—

## ՈՒՍ-ՈՒՍԻ

Ուս ուսի, ուս ուսի,
Քար քարին, շար շարին,
Քաղցրը բեռ մեր ուսին —
Տարիր, շարիր, շարիր …

Ձեռք ձեռքի, ձեռք ձեռքի,
Լար լարին, շար շարին,
Սիրտ սրտի, յերգ յերգի —
Տարիր, շարիր, շարիր …

Ու նորից ուս ուսի,
Քար քարին, շար շարին,
Քաղցրը բեռ մեր ուսին —
Տարիր, շարիր, շարիր …

---



## ԱՐԵՎՆ ՑԵԼԱՎ

Արևն յելավ դեմի սարեն,
Դեմի սարեն, սուր կատարեն
Նոր շենքերին հազար բարև,
Հազար բարև, հազար արև:
Տես պատերը բոյ են առել,
Խաղ է անում արևն այնտեղ …:

Պայծառ մընա արևի պես,
Արևի պես, բարևի պես,
Մեր շինարար քարերի պես,
Ցերկրի բարձր սարերի պես·
Հին պատերը մեկ-մեկ քանդենք
Թող արևը խաղա այնտեղ …:

Արևը մայր մտավ արդեն,
Թափեց կարմիր – կարմիր վարդեր,
Կարմիր վարդեր վառ-վառ ներկով·
Յերթ-անք դեպ տուն, յերթ-անք յերգով:
Նոր պատերը վոնց վոր խոսուն
Լուսնյակի տակ սուս-խոսում …

---

# ՏԵՔՍՏԻԼԻ ՅԵՐԳԸ

Տեքստիլ փաբրիկում մինչև իրիկուն
Բանում ենք մեկ տեղ, մեկ տեղ յես ու նա,
Քրտնում ենք մեկտեղ, դառնում որն ի բուն
Վորպես նոր անկարգ, անկարգ մեքենա:

Անցնում է որը խինդ ու ծիծաղով,
Որը արևոտ, արևոտ ժպտուն
Մեքենայի մոտ ուրախ ծիծաղկոտ,
Նրա աչքերն են, աչքերն վառ ժպտում:

Նրա աչքերը յերկնի կապույտից
Մազերը սրմա, սրմա վոսկեթել,
Իլիկների պես իմ մեքենայի
Ուրախ է նա, ուրախ ու թեթև:

Սիրում են նրան, վորպես սրտակից,
Այդպես է սիրում, սիրում նա էլ ինձ,
Մենք իրար ընկեր, մենք իրար մոտիկ
Աշխատանքի մեծ բանակից:

—



# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Հանքը ձեվող յերկու բեկսեր
Ո՞վ է քաշել հորիզոնից,
Ով է կապել հորիզոնը
Յերկու յերկաթ ընկերներին:—

—Հանքը ձեվող յերկու բեկսեր
Մենք ենք քաշել հորիզոնից
Մենք ենք կապել հորիզոնը
Յերկու յերկաթ ընկերներին:

Հանքի միջին խոր ակոսներ
Ո՞վ է քաշել այսպես ուղիղ
Ով է հանել այսքան սև հող
Ու փռել է արտի միջին:

—Հանքի միջին խոր ակոսներ
Մենք ենք քաշել այսպես ուղիղ,
Մենք ենք հանել այսքան սև հող
Ու փռել ենք արտի միջին:

Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ . . .
Ո՞վ է քանդում յերկրի խորքը,
Ո՞վ է հանում յերկրի խորքից
Պեմզա ու տուֆ, պեմզա ու տուֆ—

—Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ . . .
Մենք ենք քանդում յերկրի խորքը,
Մենք ենք հանում յերկրի խորքից,
Պեմզա ու տուֆ, պեմզա ու տուֆ:

## ՔԱՐԸ ՔԱՐԻ

Քարը՝ քարի
Դարը՝ դարի
Կառուցում ենք կյանքը մեր,
Նոր աշխարհի
Լույսը վառի
Իմ բարեկամ, իմ ընկեր:

Մեր բանակի
Հաղթանակին
Հավատով լի նայիր դու
Լույսերով վառ
Հույսերով առ
Ույժ ու կյանք տուր քո հոգուն:

Քարը՝ քարի
Դարը՝ դարի
Կյանք ենք տալիս այս դարին
Ցեց նըրա հետ
Մահ ենք հյուսում
Հին աշխարհին խավարին:

Քարը՝ քարի
Դարը՝ դարի
Հույսըդ յերբեք չը մարի,
Ձեռքիդ տըված
Քո մի քարը
Հավասար է մի դարի:

---



## ՆՈՐ ՑԵՐԳ

Սիրուն աղջիկ, ումն ես սիրում աշխարհում,
Սովետական ես մեր սիրուն աշխարհում,
—Քաղքից եկած են տղին իմ յես սիրում,
Կեպի դրած են տղին իմ յես սիրում,
Աչքերը շող են տղին իմ յես սիրում,
Մաշին քշող են տղին իմ յես սիրում:

Ընչի՞ համար դու չես սիրում են տղին,
Բոյը սիրուն, տեսքը սիրուն են տղին,
Հոնքը կիտած, բեխը սրած են տղին,
Գլխին սև սև փափախ դրած են տղին,
Մաուզերը կողքին կախած են տղին,
Մեր հանդերից հեռու փախած են տղին:

Ընչի՞ սիրեմ բեխերը ցից են տղին
Հողը դնեմ աշխարհի ցեց են տղին,
Ձեռքը տռուզ, խելքը տռուզ են տղին,
Մաուզերին ձեռքը դրած են տղին,
Ռանչպարի շիվան ու լաց են տղին:

---

## ՄԻ՛ԱՍԻՆ, ՄԻԱՍԻՆ

Գընանք արտը միասին, միասին,
Բանենք, դատենք, աշխատենք միասին,
միասին,
Կոմսոմոլ սիրուն աղջիկ, սև աղջիկ, սեր
աղջիկ,
Գընանք հանդը մութ-լուսին, մութ-լուսին,
մութ-լուսին:

Խըշխըշում են արտերի, վարդերի ծովերը,
Սըվսըվում են դաշտերի, սարերի հովերը,
Ու ամենքը միասին, միասին, միասին,
Փըսփըսում են նոր կյանքի աշխատանքն ու
սերը:

Կոմսոմոլ սիրուն աղջիկ, սև աղջիկ, սեր
աղջիկ,
Գընանք արտը մութ-լուսին, մութ-լուսին,
մութ-լուսին:
Բանենք, դատենք աշխատանք, ջան աղջիկ,
ջան աղջիկ,
Ու հետ դառնանք միասին, միասին, միասին:

---



## ԻՆՉՔԱՆ ԽԻՆԴ ԿԱ

Ինչքան խինդ կա իմ սըրտում
Կյանքի թափ կա իմ սըրտում,
Յես ջահել եմ, յեռանդուն,—

Հայրըս ինձ հետ բանվոր է—
Արև ունի իմ սըրտում,
Հայրըս կարմիր զինվոր է—
Նըրա հուրն է իմ սըրտում:

Ինչքան խինդ կա իմ սըրտում,
Կյանքի թափ կա իմ սըրտում,
Յես ջահել եմ, յեռանդուն,—
Արև—աշխարհ իմ սըրտում:

---

## ՏՐԱԿՏՈՐ ՔՇՈՂ

Լույսը բացվեց, գընամ հանդը
Կանաչել են սարն ու արտը.
Էն տրակտորը քըշող տըղան
Ինձ է կանչում, մեռնեմ նըրան:

Արևի հետ զարթնել է նա,
Զըրընգում է յերգը նըրա,
Անուշ յերգող ջահել տըղան
Ջան, իմ յարն է, մեռնեմ նըրան:

Հասակն ասես սոսի լինի,
Գիշերից սև աչեր ունի,
Գարունքից էլ սիրուն տըղան
Գերել է ինձ, մեռնեմ նըրան:

Դոշին բացված կակաչ ունի,
Ճախ ծիծաղի խոսքեր ունի,
Գեղածիծաղ անուշ տըղան
Սըրտիս զարդն է, մեռնեմ նըրան:

---



## ԿՈՄՍՈՄՈԼ ԵՆ ՏՂԵՆ

Կոմսոմոլ են տղեն
Աչքըս վրեն մընաց,
Հըրեն ճամբի վըրեն
Ձիով են ո՛ւր գնաց:

Սիրտըս տարավ իր հետ,
Կյանքըս էլ ուր մընաց,
Հերըս կուլակ մի մարդ՝
Հորըս դուշման գընաց:

Լուսըդ խավրի, իմ հեր
Դու անարև մընաս,
Կոմսոմոլ են տըղեն
Առանց բարև գընաց;

Կոմսոմոլ այ տըղա,
Աչքըս վըրեդ մընաց,
Ասես սըրտիս վըրա՝
Ձիդ դոփելով գընաց:

---

## ԼԻՆԵՅԻ, ՀՈ՛Վ ԼԻՆԵՅԻ

Արևը հողի վըրա
Մտնում է զառ քողն իրա,
Կոմսոմոլ յարիս տըված
Բարևը՝ սրտիս վրա:

Լինեյի, հող լինեյի
Լուսնյակի շող լինեյի,
Լագերում քնած յարիս
Յերեսին քող լինեյի:

Մայիսի ցող լինեյի
Իմ յարի քով լինեյի,
Թըփանգը գըրկած յարիս
Թըփանգի փող լինեյի:

---



## ԿՈՄՍՈՄՈԼ ՏՂԱ

Սեվորակ տղա, կոմսոմոլ տղա,
Յես քեզ սիրեցի կարմիր գարունքին,
Սեվորակ տղա, դու քանվոր տղա,
Յերնեկ քո յարին, եդ քո դազգյահին:
Դու քանվոր տղա, յես գեղջուկ աղջիկ,
դազգյահիդ մոտիկ:

Դու քանվոր տղա, յես գեղջուկ աղջիկ,
Նոր եմ յես յեկել գյուղից՝ գործարան,
Վոր քեզ հետ բերեմ աննման գալիք
Կաս-կարմիր գալիք՝ վառ ու հուրհրան:
Դու քանվոր տղա, յս գեղջուկ աղջիկ
դազգյահիդ մոտիկ:

---

## ԵՆՔԱՆ ՍԻՐՈՒՆ

Ենքան սիրուն ու գիտուն ես,
Ուզում ես դու վողջն իմանալ,
Գըլխիդ կարմիր լաչակ ունես,
Քըրքըջան ես ինչպես կանալ:

Դու կիմ-իդ պես թագա յես, յար,
Մի ծաղիկ ես բացված հոտով,
Թե վոր ունես խիղճ ու չիգյար
Մի՛ թողնի դու ինձ կարոտով:

Ցար ջան, մենակ մի խոսք խոսիր,
Ել չի լինի ես իմ հոգը,
Ասա միայն թե՝ սպասիր,
Միայն սա՝ կըգամ Ջագըը:

Դեռ կըսպասեմ յերկու տարի,
Մինչև ուզածդ որը հասնի,
Երբ վողջ գյուղը կըգա պարի,
Ցեյբոր կանեմ կարմիր հարսնիք:

---

## ԿՈՄՍՈՄՈԼ ՅԱՐՍ

Կոմսոմոլ տըղին, մի տես,
Կըրծքին կարմիր կիմ ունի,
Դոշ ե տվել սարի պես:

Այ տըղա, վարող տըղա,
Ջան տըղա, քրտնող տըղա
Սիրտըս քեզնեն չի դառնա:

Նըրա ճամպին յես մատաղ
Ջահել ճամպին մեր կարմիր
Մի տես ինչպես ե ուրախ:

Այ տըղա, վարող տըղա
Ջան տըղա, քըրտնող տըղա
Սիրտըս քեզնից չի դառնա:

---

## ԳՅՈՒՐՋԻ ԱՂՋԻԿ

Գյուրջի աղջիկ, յես քեզ տեսա
Սովխոզի արտում,
Վոսկե հատիկ լազութի պես
Ժըպտում եյիր դու:

Կիտել եյիր շեղջը բերքիդ
Լազութը դեղին,
Կանչում եյիր ձայնով յերգիդ,
Քո սիրած տըղին:

Համբուրել եր արևը շեկ
Այտերըդ մարմար
Աշխատում ես գյուրջի աղջիկ
Մեծ գործի համար:

Յեվ ժըպտում ե հոգիդ վըճիտ
Ու դեմքըդ վառման,
Ձեր սովխոզի արտի միջի
Լազութի ընման:

—



## ՄԱՐՈՆ ՈՒ ՍԱՐՈՆ

Սարոն

—Գարուն եկավ, Մարո՛ ջան,
Արեվն ելավ վառուն,
Քըչքըչում են, յարո՛ ջան,
Սառն աղբյուրներն, առուն,
Մեր յերկիրն ել, Մարո՛ ջան,
Վոնց վոր ծաղկած գարուն,
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,
Ջա՛ն, սավետի՛ յերկիր:

Մարոն

—Արեվն ելավ, Սա՛րո ջան,
պաչեց դոշը սարի,
Տըրակտորդ, յարո՛ ջան,
Քըշիր դեսը արի,
Թեվըդ ճըշտիր, Սարո՛ ջան,
Մեր արտերը վարի,
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,
Ջա՛ն, սավետի՛ յերկիր:

Սարոն

—Մեր գեղումը, Մարո՛ ջան,
Կին բաժին ես դառել,
Սաղ կանանցը, յարո՛ ջան,
Ժողովի յես տարել,
Հին ադաթը, Մարո՛ ջան,
Վոտնատակ ես արել·
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,
Ջա՛ն, սավետի՛ յերկիր:

**Մարոն**

—Գեղխորհրդում, Սարո՛ ջան,
Նըստել ես դու ժողով,
Թուխ յերեսըդ, յարո՛ ջան,
Լուսաբացի շողով,
Կուլակները Սարո՛ ջան,
Բըռնըվել են դողով,
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,
Ջա՛ն, սավետի՛ յերկիր։

**Սարոն**

—Զահել ես դու, Մարո՛ ջան,
Վոնց վոր կարմիր խընձոր,
Աշխատում ես, յարո՛ ջան,
Արտումը վոնց հընձվոր,
Դու մեր գեղին, Մարո՛ ջան,
Արեվի շող վոնց վոր
Ես ի՛նչ անուշ ու վառ ես,
Ջա՛ն, սավետի յերկիր։

—



# ԱՂՋԻ ՋԱՆ

Աղջի՛ ջան, խաղով ո՞ւր կերթաս,
Աչքըդ սեվ խաղող, ո՞ւր կերթաս,
Կոլխոզի արտերի միջով
Առտըվան շաղով ո՞ւր կերթաս։

—Արեվշող փարունն է կանչում,
Արտերում առուն է կանչում,
Ջա՛ն տըղա, յեկ վարի գընանք,
Արեվը վառում է, կանչում։

Աղջի՛ ջան, կըշտանց ո՞ւր կերթաս,
Թեվըդ վեր քըշտած ո՞ւր կերթաս,
Տըրակտոր—մաշինի վըրա
Առտըվան նըստած ո՞ւր կերթաս։

—Տրակտոր մի յարի կերթամ,
Կանչում է թե՝ արի, կերթամ,
Ջա՛ն տըղա, կոլխոզնիկ եմ յես,
Մեր արտերը վարի կերթամ։

Աղջի՛ ջան, կըշտանց ո՞ւր կերթաս,
Քայլվածքով թընդուն ո՞ւր կերթաս,
Կոլխոզի արտերի միջով .
Իրիկվանը դուն ո՞ւր կերթաս։

—Մաշինով պարեցի, կերթամ,
Մեր արտը վարեցի, կերթամ,
Ջա՛ն տըղա, կոլխոզնիկ եմ յես
Քո սիրտը վառեցի՞, կերթամ։

## ՑԵՍ ՆՈՒՌ ԵՄ

Ցես նուռ եմ, սիրով հուռ եմ,
Ջահել տըղին մըռմուռ-եմ,
Արագի պես լափ կըտամ,
Սեր ու սովդա կըվառեմ:

Այ տըղա, հանդ ես գընում
Կոլեկտիվ արտես գընում,
Կեպին թեքել ես ճակտիդ,
Ենպես հըպարտ ես գնում:

Տրակտորը քըշում ես,
Մըրգով լիքը աշուն ես,
Աչքով-ունքով ես անում,
Սիրտ ու հոգիս մաշում ես:

Եսոր ինձ յար ես դառել,
Կուլակին քար ես դառել,
Կոլեկտիվի ուժիցը
Գյուղի մեջ սար ես դառել:

Համ խելոք ես, համ դոլ ես,
Մի ակտիվ կոմսոմոլ ես,-
Կոլեկըտիվըդ չեն մընա՝
Սիրով ու սուփրով բոլ ես:



## ԻՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ

Նոր ծլած-ծաղկած իմ հոկտեմբերիկ,
Մեր նոր օրերի դու կարմիր ծաղիկ,
Գիշերը անցավ, արև է հիմա,
Մեր խորհրդային աշխարհի վրա.

Զարթի՛ր, իմ անուշ, իմ Հոկտեմբերիկ,
Մեր լավ օրերի դու կարմիր ծաղիկ:

Ինչ կա աշխարհում՝ լավ ու բերկրալի
Քեզ համար բացվի, քեզ համար լինի
Օրեր արևոտ ու ալվան վարդեր,
Զարթիր, իմ անուշ, գարունն է արդեն:

Զարթիր, իմ անուշ, իմ Հոկտեմբերիկ,
Մեր լավ օրերի դու կարմիր ծաղիկ:

## ԿԱՐՄԻՐ ԿՆՈՒՆՔ

Մի նոր ծաղիկ բացվեց եսօր,
Մեր շարքերում մի նոր ծաղիկ,
Ցանկանք նըրան բազուկ հըզոր,
Ըմբոստ հոգի ու սիրտ արի.—

Վողջույն փոքրիկ զինվորին:
Վողջույն, վողջույն ես որին,

Կըմեծանաս, բոյ կքաշես,
Կըմիանաս մեր բանակին,
Մեզ հետ հինը կըտապալես—
Հիմք կըդնես մեր լավ կյանքին,

Վողջույն, վողջույն ես որին
Վողջույն փոքրիկ զինվորին:

—



## ՆՈՐԵԿ ԳԵՂՋԿՈՒՀԻ

Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի
Գարունդ է յեկել, գոմից դուրս արի:

Արևը կարմիր կապել է կամար,
Կարմիր որեր է բերել քեզ համար:

Դաշտերը կանաչ, լայն ու ընդարձակ,
Կանչում են, ընկեր, յեղիր համարձակ:

Հըրի պես ուժեղ, թըրի պես կըտրուկ
Հին ադաթին դու մի լինի ըստրուկ:

Քանդիր հին գյուղը՝ բանտը սև ու մութ.
Նոր կյանքի համար յեղիր լուսամուտ:

Նորը հընի դեմ հանիր պայքարի,
Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի:

—

## ԳՅՈՒՂԸ ԿԵՐԹԱՍ

Գյուղը կերթաս, կարմիր զինվոր,
Քեզ բարի յերթ, քեզ բարի յերթ,
Բարով գընաս, գընա՛, ընկեր,
Կուռ բանակի ժիր աշակերտ:

Կարմիր զինվոր, գյուղը տար հետըդ
Յեվ նորություն, և կենցաղ
Թափի դենը, թափի հինը,
Նա դարձել է թթու քացախ:

Դու վեր քաշի գյուղը մըթից
Դեպի առև, դեպի վերև,
Աշխատանքի կանչի նըրան,
Յեղիր նրան թիկունք ու թև:

Գյուղ ու քաղաք կապիր իրար,
Կյանքը դառնա մեղվի փեթակ,
Վոր բանակի տված դասը
Զանցնի իզուր, աննըպատակ:

Գյուղ ու քաղաք կապեք իրար,
Քեզ բարի յերթ, քեզ բարի յերթ,
Բարով գընաս, գնա ընկեր,
Կուռ բանակի ժիր աշակերտ:

---



## ԸՆԿԵՐ ՏՂԵՐՔ

Ընկեր տըղերք թող յեղան
ուրախալի,

Գոչեցին միաբերան՝
«Գընաք բարի»...

Չմոռանաք մեզ յերբեք
դուք բանակում,

Զորամասից մեզ գրեք
ձեր նամակում,

Թե ինչպես եք պատրաստվում
գալիք մարտին,

Թե ինչպես պիտ ջախջախենք
բուրժույ-սարդին:

— Բոլորըդ անհոգ յեղեք,
կունենանք կապ,

Մեր գործերից կպահենք
ձեզ միշտ տեղյակ»:

Ընկեր տղերք թող յեղան
ուրախալի,

Գոչեցին միաբերան՝
«գընաք բարի»...

---

# ԿՈՄՍՈՄՈԼԿԱՆ ՈՒ ԿՈՄՍՈՄՈԼԻՍՏԸ

**Կոմսոմոլկան—**

Ուր վոր գնաս հետըդ եմ,
Թեվ ու թռիչք մոտիդ եմ,
Կոմսոմոլիստ ընկեր ես,
Ուր վոր դու ես—ենտեղ յես։

**Կոմսոմոլիստը—**

Կոմսոմոլում գրված ենք,
Կուլակի դեմ սրված ենք,
Նոր կենցաղով մենք գյուղ գանք—
Հընի բուրդը քամուն տանք։

**Կոմսոմոլկան—**

Չարչի, կուլակ, մուկ, մորեխ,
Մեր բատրակը անտըրեխ․
Չարչի, կուլակ հուշտ անենք,
Գյուղ—գյուղացի կուշտ անենք։

**Կոմսոմոլիստը—**

Գյուղին բերենք նավթ ու աղ,
Աման—չաման, տաշտ ու մաղ,
Ուրագ, կացին, փայտ ու մեխ,
Մըկրատ—մատնոց, թել—ասեղ։

**Կոմսոմոլկան—**

Գյուղ ու քաղաք հարեվան,
Թող չեն մընա Յերեվան,
Մենք նրան տանք նյութեղեն—
Տեղը բերենք չըթեղն։



**Կոմսոմոլիստը—**

Շըգթան ունի շատ ողակ,
Միացրինք գյուղ քաղաք,
Ես մեր գյուղը նոր է, նոր
Գյուղն ենք բերել տըրաքտոր։

**Կոմսոմոլկան—**

Խըրճիթները գյուղկենտրոն,
Ժամերի տեղ՝ բեմ—թատրոն,
Գազեթ, դըպրոց, լիկկայան,
Դեղ ու դոխտուր գյուղ յեկան։

**Կոմսոմոլիստը—**

Վոչ գլուխ են, վոչ պոչ են,
Տերտեր—մերտեր էլ հեչ են,
Զուռնեն պըսակ ու կնունք,
Մաշտոց, քելեխ, բուրվառ, խունկ։

**Միասին—**

Նոր կենցաղը յեկել է,
Գյուղը կարմիր ներկել է,
Աղջի՛, տըղին լավ հասար,
Աղջիկ, տըղա հավասար։

—

# ՆՈՐ ՀՈՐՈՎԵԼ...

Հրեն տրակտորն է հերկում
Ցերկաթե յերգ է յերգում.
Հողը դառնում է բերքուն
Ջա՜ն, յերկաթե հորովել...

Կոլխոզը ուժ է առել,
Ուժ ու յեռանդ է բերել.
Գյուղը նոր կյանք է առել.
Ջա՜ն, յերկաթե հորովել...

Վոսկեպսակ արտերում
Պիոներներն են զիլ կանչում.
Նոր կյանքի յերգն են յերգում
Ջա՜ն, յերկաթե հորովել...

Քաղաքից հյուր է յեկել,
Բրիգադը գյուղ է յեկել.
Կոմսոմոլ են ու չահել
Ջա՜ն, յերկաթե հորովել...

Տեսա յարիս կոլխոզում
ԿիՄ-ը վառվում էր կրծքում.
Կոմսոմոլսիտ է դառել
Ջա՜ն, յերկաթե հորովել...

—



# ՋԱՎՈՂԻ ՃԱՄԲԻՆ

Մաշինը պորշինը շարժեց,
Պորշինը շարժեց ու տնքաց,
Զանգակը երկու հետ զարկեց—
Կոմսոմոլ յարս գնաց:

Մաշի՛ն ջան, զուգոկիդ ղուրբան,
Ուսուլով տար դու յարիս,
Մազութով ջրվի քո ճամբան,
Բանվոր է նա ել քեզ պես:

Բազվից նա ոտպուկ յեկավ,
Կոլխոզը սարքեց, դրստեց,
Տրիերը հին ու խարաբ
Ալմազի թրի պես սազ արեց:

Դու յել մի զավոդ ես մաշին,
Դու յել կոմսոմոլ հիմա—
Թոցրու ու յարիս հասցրու
Մազութի զավոդը իրա:

Մաշինը կեռ ավեց—անցավ
Յարիս հետ—սիրտս հետ գնաց.
Ու քամին աղլուխը թոցրեց
Մաշինի ակոշկից հանած:

Մաշին ջան, աչքերիդ մատաղ,
Աղլուխս ծոցումս երես.
Ճրագով ռելսիդ լիս կանեմ,
Մինչև իմ յարիս բերես:

—

## ԳԱՐՈՒՆ Է ԳԱՐՈՒՆ

Գարուն է, գարուն,
Նոր բացված գարուն,
Սովետի դարում, ջան

Վերջ տանք արորը
Գյուղ բեր տրակտորը
Վարենք մեր հողը, ջան։

Սերմզտիչ գյուղում
Զտել ենք սերմը,
Ցանել ենք արտը, ջան։

Կոլխոզ մտել ես
Վարի վարիչ ես
Սերմդ ցանել ես, ջան։

---



## ԻՆՋ ՍԻՐՈՒՆ Է

Արեվն յելավ լույս արեց,
Ջա՛ն, սովետի գարունն է․
Ձյունը դաշտից դուրս արեց,
Գարունն էս ի՛նչ սիրուն է։

Յելնենք արտը վար անենք
Տրակտորի գարուն է․
Շարքացանով ցանք անենք,
Շարքացանը սիրուն է։

Կոմսոմոլիստ Կարոյին,
— Ես ինչ պայծառ գարուն է, —
Կյանքս կտամ կամովին
Կոմսոմոլ է, սիրուն է։

Յերկաթե հինգ—ամյակը
Յերկաթավոր գարուն է․
Սովետական աշխարհի
Գարունն էս ի՛նչ սիրուն է։

Կոմսոմոլ բատրակ տղեն
Ջան, սովետի գարունն է,
Տրակտոր քշող տղեն
Գարունից էլ սիրուն է։

---

## ԲՈԼՇԵՎԻԿԻ ԹՈՌՆԵՐԸ

Ես ինչ պայծառ որ եկավ
Լե, լե, լե, լե, անուշ ջան.
Անթառամ գարուն եկավ
Հոփ, լե, լե, լե, ջան է ջան:

Արտ ենք ելել կանաչի,
Թող կուլակը ճանաչի,
Բոլշևիկի թոռներ ենք
Կարմիր գյուղի տերն ենք:

Կանաչ են արտերը,
Կորել են մեր դարդերը
Հազարագույն վարդի պես
Բացվել են մեր սրտերը:

Ես ինչ այծայր որ եկավ
Լե, լե, լե, լե, ընկե՛ր ջան:
Կոլխոզի գարուն եկավ
Հոփ, լե, լե, լե, ջան, ջան:

---



## ՅԱՐՈ-ՄԱՐՈ

Գնանք կոլխոզ արտը քաղենք,
Հասկերի մեջ ծիծաղ մաղենք,
Մեր սրտերը սիրով դաղենք
Յարո Մարո, յարո Մարո
Մեր սրտերը սիրով դաղենք:

Արեգակն է արտը վառել
Տես հասկերը հով են առել
Դեղին դեղին ծով են դառել
Յարո Մարո, յարո Մարո
Դեղին դեղին ծով են դառել:

Ել չեն հարցնում թումբ ու սահման
Օրորվում են, անուշ խոսում
Սրվսրվում են, սրտից հոսում
Յարո Մարո յարո Մարո
Սրվսրվում են սրտից հոսում:

Յերգ են փռել, ծիծաղ վառել
Սարից քարից հով են առել
Հով են առել, ծով են դառել
Յարո Մարո, յարո Մարո
Հով են առել, ծով են դառել:

---

# ՑԱՆԿ


| | ՅԵՐԳԵՐԻ ԱՆՈՒՆԸ | ԽՈՍՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՅԵՐԳԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՅԵՐԵՍ |
|---|---|---|---|---|
| 1 | Ալ դրոշով | * * | * * | 30 |
| 2 | Անմար մնա | Ալազան | Ռոմ. Մելիքյան | 35 |
| 3 | Անվախ ընկեր | * * | * * | 10 |
| 4 | Աղջի ջան | Ա. Վշտունի | Ռոմ. Մելիքյան | 63 |
| 5 | Աշխարհով մեկ | Ա. Վարդանյան | Ռոմ. Մելիքյան | 40 |
| 6 | Աշխատանքային | Հ. Մերկյան | Ռոմ. Մելիքյան | 49 |
| 7 | Արևով յելավ | Գ. Մահարի | Ռոմ. Մելիքյան | 47 |
| 8 | Արտերը ծլել են | Ա. Վշտունի | Ա. Տեր-Ղևոնդյան | 38 |
| 9 | Արտերը չոր էյին | Ա. Վենկառն | Ռոմ. Մելիքյան | 36 |
| 10 | Բոլշևիկի թոռները | Վ. Մկրտչյան | ——— | 76 |
| 11 | Գարուն է գարուն | Ո. Մինասյան | ——— | 74 |
| 12 | Գոռ մրրիկները | * * | * * | 7 |
| 13 | Գյուրջի աղջիկ | Գ. Սարյան | Գ. Ղազարյան | 60 |
| 14 | Գյուղը կերթա | Խնկո-Ապեր | Ռոմ. Մելիքյան | 68 |
| 15 | Դո՛ւմ-դո՛ւմ | Ալազան | Ռոմ. Մելիքյան | 42 |
| 16 | Դու գոհ գնացիր | Մ. Աղայան | * * | 6 |
| 17 | Դուք գոհ գնացիք | * * | * * | 5 |
| 18 | Դեպի մարտ դիմենք | * * | * * | 13 |
| 19 | Յարո—Մարո | Խ. Դաշտենց | ——— | 77 |
| 20 | Յես նոր եմ | Ս. Տարոնցի | Ռոմ. Մելիքյան | 64 |
| 21 | Յերիտ գվարդիա | * * | * * | 25 |
| 22 | Յերիտ կոմունիստներ | * * | * * | 27 |
| 23 | Զավոդի ճամբին | Բ. Շահումյան | ——— | 73 |
| 24 | Ենքան սիրուն | Ս. Վահունի | Ռոմ. Մելիքյան | 58 |
| 25 | Ես բերքը բարին ա | Վ. Տալյան | * * | 41 |
| 26 | Եկեյ՛ պիոներ | Ա. Տիգրանյան | * * | 81 |
| 27 | Եյ՛ մարտիկներ | * * | * * | 12 |
| 28 | Ընկեր աղերք | Ա. Ռեվազյան | * * | 69 |
| 29 | Իմ հոկտեմբերիկ | Գ. Մահարի | Ռոմ. Մելիքյան | 65 |
| 30 | Ինտերնացիոնալ | Ցե. Զարենց | * * | 3 |
| 31 | Ինչքան խինդ կա | Վարդգես | Ռոմ. Մելիքյան | 53 |
| 32 | Ինչ սիրուն է | Սևուշ Հովազ | ——— | 75 |
| 33 | Լինեյի, հով լինեյի | Գ. Սարյան | Ռոմ. Մելիքյան | 56 |
| 34 | Լուսե տոն է | Վ. Նորենց | Ռոմ. Մելիքյան | 44 |
| 35 | Խիզախ, միշտ խիզախ | * * | * * | 16 |
| 36 | Ծլել է արտս | Ալազան | Միք. Միրզայան | 57 |
| 37 | Ծովերով | * * | * * | 22 |
| 38 | Կարմիր կնունք | Գ. Մահարի | Ռոմ. Մելիքյան | 66 |
| 39 | Կոմսոմոլ են տղեն | Գ. Սարյան | Ռոմ. Մելիքյան | 55 |
| 40 | Կոմսոմոլ յարս | Վ. Խապեր | Վ. Տալյան | 59 |
| 41 | Կոմսոմոլ տղա | Սարմեն | Գ. Ղազարյան | 57 |
| 42 | Կոմսոմոլկան ու Կ–լխոզը | Խնկո-Ապեր | Ռոմ. Մելիքյան | 70 |
| 43 | Հանդարտ ընկերներ | * * | * * | 29 |
| 44 | Հեյ՛ առաջ, առաջ | * * | * * | 20 |
| 45 | Հազարներն են | Գր. Աշոտ | * * | 35 |
| 46 | Հե՛յ դարձիր, մեքենա | Հ. Ահարոնյան | Ռոմ. Մելիքյան | 45 |
| 47 | Ղարդաշ Հասան | Խնկո-Ապեր | Ռոմ. Մելիքյան | 34 |
| 48 | Մարոն ու Սարոն | Ա. Վշտունի | Ռոմ. Մելիքյան | 61 |
| 49 | Մեկտեղ, պողպատե | * * | * * | 21 |
| 50 | Մենք դարբիններ | * * | * * | 15 |
| 51 | Մենք կոմյերիտ | * * | * * | 28 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 52 | Ձեզ յերգում ենք | Սանվել | * * | 52 |
| 53 | Մեր դաշտերում | Խ. Հրաչյան | Ռոմ. Մելիքյան | 43 |
| 54 | Մեր կամքը | Ն. Զարյան | Կ. Զաքարյան | 23 |
| 55 | Միասին, միասին | Խ. Դաշտենց | Ռոմ. Մելիքյան | 52 |
| 56 | Մուրճերի զարկերով | * * | ——— | 14 |
| 57 | Մեր հանդում | Ա. Վենկառն | Ա. Տեր-Ղևոնդյան | 39 |
| 58 | Նոր յերգ | Ցե. Զարենց | Ալ. Մելիքյան | 51 |
| 59 | Նորեկ գեղջկուհի | Խնկո-Ապեր | Ռոմ. Մելիքյան | 67 |
| 60 | Նոր հոսովել | Կ. Շեկոյան | * * | 72 |
| 61 | Շաչյուն ու պայթյուն | * * | * * | 8 |
| 62 | Պատրաստ, պատրաստ | * * | * * | 17 |
| 63 | Սուրբ կորուկ | * * | * * | 19 |
| 64 | Տեկստիլի յերգը | Ալազան | Ալ. Մելիքյան | 48 |
| 65 | Տրակտոր քշող | Վ. Աղասյան | Ազ. Մանուկյան | 54 |
| 66 | Ցորը քաղի | Գ. Սարյան | Ռոմ. Մելիքյան | 50 |
| 67 | Ուս-ուսի | Գ. Մահարի | Ռոմ. Մելիքյան | 46 |


*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ստորանիշ յերգերի մշակումը (ձայնի և դաշնամուրի համար) կատարել է ընկ. Ռոմանոս Մելիքյանը.*

———


ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍԽՌ-Арм ССР
им. А. Мясникяна


ԳԻՆԸ 50 ԿՈՊ.
КРАСНЫЙ ПЕСЕННИК

ՀՀ Ազգային գրադարան
NL0352399

73.011